ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հաստատում եմ՝
ՀՀ <<Ուսանողական մարզական ֆեդերացիա>> ՀԿ
նախագահ _____Հովհ. Գաբրիելյան
05.02.2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ 25-ՐԴ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ՀՀ ուսանողական մարզական ավանդական 25-րդ խաղերը, որպես բարձրագույն ուսումնական հաստատություններում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացման ուղղությամբ տարվող աշխատանքների ստուգատես, հետապնդում են հետևյալ նպատակներն ու խնդիրները.

1) ուսանողության շրջանում առողջ կենսակերպի արմատավորում և մարզական-մասսայական միջոցառումներին ուսանողության ներգրավում.

2) ուսանողությանը մշտական գործող մարզական խմբակներում ներգրավելու միջոցով նպաստել նրանց, ֆիզիկական կարողությունների կատարելագործմանը, առողջության ամրապնդմանը, նախապատրաստելով նրանց աշխատանքային գործունեությանը և երկրի պաշտպանության կարևորագույն գործին:

3) ակտիվացնել բարձրագույն ուսումնական հաստատությունների մարզական ակումբների գործունեությունը:

4) խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձևերի ազգային ֆեդերացիաների հետ համագործակցելով նպաստել նրանց զարգացմանը և ուսանողության շրջանում մասսայականացմանը:

5) ի հայտ բերել լավագույն ուսանող-մարզիկներին՝ համաշխարհային և Եվրոպական համալսարանական մարզական խաղերին նախապատրաստվելու և հաջող մասնակցությունը ապահովելու համար:

2. Ժամանակացույց՝ 2024թ. ՀՀ ուսանողական մարզական 25-րդ խաղերի անցկացման.

№	Մարզաձևի անվանումը	Անց.ժամկետը	Անցկացման վայրը
1.	Բազկամարտ /տղաներ/	Մարտի 14-15	ՀՊՏՀ Մ/դ մանդատային – 12.03. ժ.14.00
2.	Ֆուտզալի Լիգա /տղաներ/	Մարտ - Մայիս	ԵՊՀ Մ/դ մանդատային – 15.03. ժ.14.00 ՀՊՏՀ-ում
3.	Շախմատ /բլից/	Մարտի 20-22	Հայաստանի կենտրոնական շախմատի տուն մանդատային – 18.03 - ժ.14.00
4.	Հրաձգություն /տղաներ, աղջիկներ/	Մարտի 28-29	ԵՊՀ հրաձգարան, մանդատային – 26.03 - ժ.14.00
5.	3X3 Բասկետբոլ /տղաներ, աղջիկներ/	Ապրիլի 16-17	ԵՊՀ Մ/դ, մանդատային – 12.04 - ժ.14.00
6.	Սեղանի թենիս /տղաներ, աղջիկներ/	Ապրիլի 27-28	ՇՊՀ ք. Գյումրի, մանդատային – 23.04. ժ.14.00 ՀՊՏՀ-ում
7.	Լողափնյա վոլեյբոլ /տղաներ, աղջիկներ/	Մայիսի 16-18	Մ/դ-ը կնշվի ավելի ուշ մանդատային – 13.05 - ժ.14.00 ՀՊՏՀ
8.	Սպորտային ժայռամագլցում /տղաներ, աղջիկներ/ և պարանի ձգում	Սեպտեմբերի 20	ԵՊՀ-ի Մ/դ, մանդատային – 16.09 - ժ.14.00
9.	Բադմինթոն /տղաներ, աղջիկներ/	Սեպտեմբերի 21-22	ՇՊՀ Մ/դ-ը ք. Գյումրի մանդատային 18.09. ժ.14.00 ՀՊՏՀ-ում
10.	Ֆուտզալի Գավաթ /տղաներ/	Սեպտեմբեր - Հոկտեմբեր	ԵՊՀ Մ/դ մանդատային – 18.09. ժ.14.00 ՀՊՏՀ-ում
11.	Բասկետբոլ /տղաներ, աղջիկներ/	Հոկտեմբերի 14-25	ԵՊՀ Մ/դ, մանդատային – 10.10. ժ.14.00
12.	Վոլեյբոլ /տղաներ, աղջիկներ/	Նոյեմբերի 4-15	ՀՊՏՀ Մ/դ մանդատային – 02.11. ժ.14.00

Բոլոր մարզաձևերի մրցումների սկիզբը ժամը - 14.00.-ին, հանգստյան և տոնական օրերին ժամը - 11.00-ին: Օրերի փոփոխման դեպքում բուհ-երը նախապես կտեղեկացվեն:

3. Խաղերի ծրագիրը և թիմերի քանակական կազմը.

№	մարզաձևի անվանումը	թիմերի քանակական կազմը			
		տղաներ	աղջիկներ	մարզիչ	ընդամենը
1.	Շախմատ /բլից/	5	5	2	12
2.	Լողափնյա վոլեյբոլ	2	2	2	6
3.	3Х3 Բասկետբոլ	3+1	3+1	2	10
4.	Պարանի ձգում	4	2	1	7
5.	Հրաձգություն	3	3	2	8
6.	Սպորտային ժայռամագլցում	2	2	1	5
7.	Բադմինթոն	2	2	1	5
8.	Բազկամարտ	10	8	2	20
9.	Սեղանի թենիս	3	3	2	8
10.	Ֆուտզալ	20	-	2	22
11.	Վոլեյբոլ	12	12	2	26
12.	Բասկետբոլ	12	12	2	26

4. ***Խաղերը անց են կացվում Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների և նրանց մասնաճյուղերի թիմերի միջև: Խաղերին թույլատրվում է մասնակցել 17 տարին լրացած և 35 տարին չլրացած ցերեկային և հեռակա բաժինների, մագիստրատուրայի ուսանողներին ու ասպիրանտներին, ինչպես նաև մասնակից ԲՈՒՀ-ին կից գործող ուսումնարանների կամ քոլեջների ուսանողները, ֆուտզալում, բասկետբոլում և վոլեյբոլում թիմի 25% չափով, իսկ մյուս մարզաձևերում մեկ տղա, մեկ աղջիկ:***

ԲՈՒՀ-երի մասնաճյուղերի մարզիկներին թույլատրվում է ընդգրկել մայր ԲՈՒՀ-ի թիմի կազմում, եթե մասնաճյուղը տվյալ մարզաձևի մրցումներում առանձին թիմով չի մասնակցում:

2023-2024թթ. ուսումնական տարում ԲՈՒՀ-երն ավարտած շրջանավարտներին թույլատրվում է մասնակցել խաղերի աշնանային փուլի մարզաձևերի մրցումներին տվյալ ԲՈՒՀ-ի թիմի կազմում:

ՀՀ հավաքական և ՀՀ պրոֆեսիոնալ թիմերում հանդես եկող ուսանողներին՝ անկախ նրանց պատրաստվածության աստիճանից, թույլատրվում է հանդես գալ իրենց ԲՈՒՀ-ի թիմի կազմում:

5. Մարզական խաղերի ընդհանուր վերահսկումն իրականացնում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ անմիջական կազմակերպումն ու անցկացման պատասխանատուն է ՀՀ <<Ուսանողական մարզական ֆեդերացիա>> հասարակական կազմակերպությունը, համագործակցելով ծրագրով նախատեսված մարզաձևերի ազգային ֆեդերացիաների և մասնակից ԲՈՒՀ-երի հետ: Խաղերի անցկացման անմիջական ղեկավարությունը դրվում է գլխավոր մրցավարական հանձնաժողովի, իսկ առանձին մարզաձևերի առաջնությունների անցկացման պատասխանատվությունը՝ համապատասխան մրցավարական հանձնաժողովների վրա:

6. Խաղերի առանձին մարզաձևերի մրցանակակիր թիմերը կպարգևատրվեն ուսանողական մարզական ֆեդերացիայի կողմից սահմանված գավաթներով, պատվոգրերով և նվերներով: 1-3-րդ

տեղեր գրված թիմերի անդամներն ու անհատական մրցումների 1-3-րդ մրցանակակիրները և թիմերի մարզիչները կպարգևատրվեն համապատասխան մեդալներով և պատվոգրերով:

Գավաթներով, պատվոգրերով և նվերներով են պարգևատրվում նաև ընդհանուր թիմային հաշվարկով 1-3-րդ մրցանակային տեղերը զբաղեցրած բարձրագույն ուսումնական հաստատությունները: ԲՈՒՀ-երի ընդհանուր թիմային հաշվարկում մրցանակային տեղերը որոշվում են բոլոր մարզաձևերի (անհատական և թիմային) առաջինից տասներորդ տեղերը գրված անհատական և թիմային առաջնությունների արդյունքները՝ համաձայն Ա և Բ հաշվարկային սանդղակների:

Ա. Անհատական առաջնություններում
միավորների հաշվարկի սանդղակ

Գրված տեղը	Միավորը
I	30
II	25
III	20

Բ. Թիմային առաջնությունների
միավորների հաշվարկի սանդղակ

Գրված տեղը	Միավորը
I	100
II	80
III	60

7. Խաղերին մասնակցելու նախնական հայտերը ըստ մարզաձևերի, որտեղ պետք է նշել կազմակերպության ՀՎՀՀ-ն և որ առաջնությունում ինչ թիմերով են մասնակցելու, հաստատված ԲՈՒՀ-ի ղեկավարի կողմից ներկայացվում է ՀՀ Ուսանողական մարզական ֆեդերացիա, armssf.info@gmail.com էլ.հասցեով մինչև 2024թ. մարտի 4-ը:

Սահմանված ձևի անվանական հայտերը՝ հաստատված ԲՈՒՀ-ի ղեկավարի և բժշկի ստորագրությամբ ու կնիքով, որոնցում պետք է նշել կազմակերպության անվանումը, մարզիկների ազգանունը, անունը, ծննդյան թիվը, մարզական կարգը, մարզաձևի անվանումը և վարժությունը ներկայացվում են մարզաձևի մրցավարական հանձնաժողովին՝ մրցավարների և թիմերի ներկայացուցիչների համատեղ խորհրդակցության օրը:

Յուրաքանչյուր մասնակից, այդ թվում մարզիչները և մարզիկները, մրցումների ամբողջ ընթացքում, իր հետ պետք է ունենա անձնագիր կամ նույնականացման քարդ, և ստուգարքային գրքույկ, ասպիրանտի վկայական կամ վերջիններիս բացակայության դեպքում ԲՈՒՀ-ի ռեկտորի կողմից հաստատված տեղեկանք՝ ուսանող լինելու փաստի վերաբերյալ:

8. Խաղերին ՀՀ մարզերից գործուղված թիմերի անդամների ճանապարհածախսը, գիշերավարձը և օրապահիկը, տեղի մասնակիցների սննդի գումարը, համաձայն ՀՀ Կառավարության 2004թ. մայիսի 13-ի թիվ 692-Ն որոշմամբ սահմանված կարգի և ՀՀ Կառավարության 14 սեպտեմբերի 2023 թվականի N 1563-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշմամբ հոգում են գործուղող կազմակերպությունները:

Մարզական խաղերի ծրագրում նշված բոլոր մարզաձևերի առաջնությունները իրականացնող մրցավարներին և սպասարկող անձնակազմին սննդի գումարով ապահովելու, ք. երևանից դուրս կազմակերպվող առաջնությունների բոլոր մասնակիցների տրանսպորտային և սննդի ծախսերը, համալարանական մարզակառույցների վարձակալման, մրցանակակիրների պարգևատրման ծախսերը հոգում է ուսանողական մարզական ֆեդերացիան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հատկացված դրամաշնորհային ֆինանսական միջոցների հաշվին, իսկ

կազմակերպչական այլ բնույթի ծախսերը հոգում է հովանավորչական մուտքերի և մասնակից ԲՈՒՀ-երից որպես մասնակցության վճար հավաքագրված ֆինանսական միջոցների հաշվին՝ համաձայն կից աղյուսակի:

Մասնակցության վճարները անհրաժեշտ է փոխանցել մինչև ս.թ. մարտի 11-ը.

<<Ուսանողական մարզական ֆեդերացիա>> ՀԿ

ՀՎՀՀ 00417301, Հ/Հ 163048122192 Հայէկոնոմբանկ Սպանդարյան մասնաճյուղ

N	Առաջնության անվանումը	Գումար /ՀՀ դրամ/ մեկ թիմի համար
1.	Սպորտային ժայռամագլցում և պարանի ձգում	--
2.	Շախմատ /բլից/ անհատական-թիմային	40.000
3.	Բադմինթոն	30.000
4.	3Х3 Բասկետբոլ	30.000
5.	Լողափնյա վոլեյբոլ /տղա, աղջիկ առանձին թիմեր/	30.000
6.	Սեղանի թենիս	40.000
7.	Բազկամարտ	20.000
8.	Ֆուտզալի լիգա և Գավաթ /տղաներ/	100.000
9.	Առանձին Ֆուտզալի Գավաթ /տղաներ/	60.000
10.	Վոլեյբոլ /տղա, աղջիկ առանձին թիմեր /	40.000
11.	Բասկետբոլ /տղա, աղջիկ առանձին թիմեր /	40.000
12.	Հրաձգություն	20.000

9. Բոլոր մարզաձևերի մրցումները կանցկացվեն համաձայն գործող միջազգային կանոնների և ՀՀ տվյալ մարզաձևերի ազգային ֆեդերացիաների հետ սերտ համագործակցությամբ:

Մրցումների անցկացման կարգը՝ հաշվի առնելով մասնակից թիմերի քանակը, որոշվում է թիմերի ներկայացուցիչների և մարզաձևի մրցավարական հանձնաժողովների համատեղ խորհրդակցության ժամանակ, եթե այլ բան կարգով նախատեսված չէ: Առաջնությունները կանցկացվեն չորս և ավելի թիմերի մասնակցության պարագայում:

Խաղային մարզաձևերում՝

- թիմերը պարտադիր պետք է ունենան 2 տարբեր գույնի մարզահագուստ, ինչպես նաև նախավարժանքի համար անհրաժեշտ քանակի գնդակներ
- թիմային տեղերը որոշվում են վաստակած միավորների առավելագույն գումարով
  - առավելագույն թվով հաղթանակներ ունեցող թիմին
  - այդ թիմերի հանդիպումներում խաղափուլերի, նետած/խփած/ և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն ունեցող թիմերին
  - այդ թիմերի հանդիպումներում նույն ցուցանիշների լավագույն հարաբերություն ունեցող թիմին

<u>3Х3 բասկետբոլ</u> - հաղթանակի համար տրվում է 2, պարտության 1, խաղին չներկայանալու կամ զրկվելու դեպքում 0 միավոր /0:21/ հաշվով:

Բասկետբոլ - Հաղթանակի համար տրվում է 2, պարտության 1, խաղին չներկայանալու կամզրկվելու դեպքում 0 միավոր /0:20/ հաշվով:

<u>Լողափնյա վոլեյբոլ</u> - հաղթանակի համար տրվում է՝ 2:0 հաշվի դեպքում 3, 2:1 հաշվի դեպքում 2, 1:2 հաշվով պարտության դեպքում 1, 0:2 հաշվով պարտության խաղին չներկայանալու կամ զրկվելու դեպքում 0 միավոր ՝ 0:2 /0:15, 0:15 կամ 0:21, 0:21/ հաշվով:

Արագ շախմատ – մրցումներն անց են կացվում անհատական-թիմային եղանակով՝ բլից առաջնությունը առանձին, թիմային հաշվարկ են վերցվում թիմի 5 անդամներից լավագույն 2 արդյունքը:

Սպորտային ժայռամագլցում - մրցումներն անց են կացվելու անհատական եղանակով՝ աղջիկների և տղաների միջև առանձին-առանձին:

Բադմինթոն - Անցկացվելու է անհատական և զուգախաղերի առաջնություն: աղջիկների և տղաների միջև առանձին-առանձին

Պարանի ձգում - անց են կացվում թիմային առաջնություն /թիմերի կազմը 4 տղա + 2 աղջիկ/:

Վոլեյբոլ - Հաղթանակի համար տրվում է՝ 2:0 հաշվի դեպքում 3, 2:1 հաշվի դեպքում 2, 1:2 հաշվով պարտության դեպքում 1, 0:2 հաշվով պարտության, խաղին չներկայանալու կամ զրկվելու դեպքում 0 միավոր ՝ 0:2 /0:25, 0:25/ հաշվով:

Ֆուտզալ տղաներ – Խաղերը կանցկացվեն հիմք ընդունելով ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի ֆուտզալ խաղի կանոնակարգը:

Լիգա - անցկացվելու է 2 փուլով՝ 1-ին շրջանաձև և 2-րդ փլեյ օֆֆ լավագույն 8 թիմերի մասնակցություամբ: Հաղթանակի համար տրվում է 3, ոչ-ոքիի դեպքում 1, պարտության, խաղին չներկայանալու կամ զրկվելու դեպքում 0 միավոր /0:3/ հաշվով: Մեկ խաղի ընթացքում մեկ կարմիր կամ երկու դեղին քարտեր ստացած խաղացողը հեռացվում է դաշտից և բաց է թողնում թիմի հաջորդ խաղը լիգայում:

Մասնակից թիմերին կտրամադրվի երկու ֆուտզալի գնդակ:

Գավաթ - անցկացվելու է փլեյ օֆֆ փուլ առավելագոիյնը 16 թիմերի մասնակցություամբ: Մեկ խաղի ընթացքում մեկ կարմիր կամ երկու դեղին քարտեր ստացած խաղացողը հեռացվում է դաշտից և բաց է թողնում թիմի հաջորդ խաղը լիգայում:

Սեղանի թենիս – մրցումներն անց են կացվում թիմային և անհատական եղանակով՝ աղջիկների և տղաների միջև առանձին-առանձին: Անհատական մրցումներից յուրաքանչյուր ԲՈՒՀ-ից թույլատրվում է մասնակցել ոչ ավելի քան 3 աղջիկներ և 3 տղաներ:

Հրաձգություն – Մրցումներն անցկացվում են օդամղիչ հրացանով 10 մետրից, 3 փորձնական և 5 հաշվարկային կրակոցներով՝ հիմք ընդունելով հրաձգության միջազգային ֆեդերացիայի կանոնակարգը: Մրցումները կանցկացվեն անհատական և թիմային եղանակով: Թիմային արդյունքները որոշվում են տղաների և աղջիկների մոտ առանձին թիմի բոլոր 3 անդամների կողմից վաստակած միավորների առավելագույն գումարով:

Բազկամարտ – Մրցումների անցկացման պայմանները որոշում է մրցավարական հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Բազկամարտի միջազգային ֆեդերացիայի կանոնակարգը: Մրցումներն անցկացվում են աջ և ձախ ձեռքերով: Մրցումներն անցկացվելու են հինգ քաշային կարգերով, տղաներ՝ մինչև 60 կգ, 70 կգ, 80 կգ, 90 կգ, և + 90 կգ, աղջիկներ՝ չորս քաշային կարգերում՝ 50 կգ, 60 կգ, 70 կգ և +70 կգ: Յուրաքանչյուր քաշային կարգում մասնակից թիմերին թույլատրվում է ներկայացնել 2-ից ոչ ավելի մարզիկներ:

Լրացուցիչ հարցերով դիմել ՀՀ <<Ուսանողական մարզական ֆեդերացիա>> ՀԿ՝ հասցե ք.Երևան Ծարավ Աղբյուր փող, 55/11, 35, (հեռ. 094008458, 096007447, էլ. հասցե armssf.info@gmail.com Հովհաննես Գաբրիելյան՝ նախագահ):